# ՀՐԱՆՏ ՄԱՐՏԻՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

***ՀԽՍՀ վիճակագրական վարչության պետ***
***(1954-1961թթ.)***

Հրանտ Մարտինի Մարտիրոսյանը ծվել է 1913թ. Թիֆլիս քաղաքում, ծառայողի ընտանիքում:

1930թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցել ՀԽՍՀ Անի-Պեմզայի հանքերում:

1931-1937թթ. սովորել է Անդրկովկասյան արդյունաբերական ինստիտուտի «Լեռնային» ֆակուլտետում: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել է Դոնբասի ածխահանքերում:

1938-1940թթ. ընտրվել է Դոնի Ռոստովի մարզային կոմիտեի քարտուղար, ապա 1940թ. գործուղվել ք. Մոսկվա՝ ՀամԿ(բ)Պ Կենտկոմին կից կուսակցական դպրոցում սովորելու համար:

1942թ. ավարտելով կուսակցական դպրոցը, աշխատանքի է նշանակվել ՀամԿ(բ)Պ Կենտրոնական կոմիտեում, սկզբում որպես հրահանգիչ, ապա բաժանմունքի վարիչ:

1947թ. տեղափոխվել է Հայաստան և աշխատել ՀամԿ(բ)Պ Կենտկոմի կուսակցական, արհմիութենական և կոմերիտական մարմինների բաժնի վարիչ:

1953թ. պաշտոնավարել է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի երկրորդ քարտուղարի, իսկ 1954թ.՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդի տեղակալի պաշտոններում:

1954-1961թթ. զբաղեցրել է ՀԽՍՀ վիճակագրական վարչության պետի պաշտոնը (1960թ. այն վերանվանվել է ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր կենտրոնական վիճակագրական վարչություն):

Հրանտ Մարտիրոսյանը պարգևատրվել է «Մոսկվայի պաշտպանության համար», «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ցուցաբերած բարեխիղճ աշխատանքի համար» և «Մոսկվայի 800-ամյակի առթիվ» շքանշաններով:

Հրանտ Մարտիրոսյանը վախճանվել է 1967 թվականին: